

И. Штуттгартен

for Bureaux

891.99

U-52

14 FEB 2011



Ս. ՄԵԼԻՔՍԵՅԱՆ

ԵՒ ՄԱՐԻ

91.99
552

5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺԱՊԱՐԱՆԻ ԶԵՆՈՐԱԿ

16
Գրականությունը բոլոր լեզուներով, միացե՛ք.

391.99

5-52


այ՛

Ս. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Ք Ի Թ Մ Ա Թ Ո Ն

(Պ Ա Ց Մ Վ Ա Մ Ի Ք)

4852
1001



ՅԵՐԵՎԱՆ
1925

Արտատպւած է Հայկոռպի, Բանկոռպի որ-
գան «Հայաստանի Կոռպերացիա» ամսագրից «Կո-
ռպերատիվի դեմ» վերնագրով:

ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրառեպար № 1730 պ. № 1841 Տիրաժ 1.500

Ք Ի Թ Մ Ա Թ Ո Ն

(Նվեր՝ Կոռպերացոր Ա. Դասակյանի)

Են որը վոնց վոր թեժ թանդիր լիներ, իսկ
Քիթ Մաթոնի մտքերը, ասես, թոնդրի մեջ կախված
կաթսայի փլթփլթող ջրում թռչկոտող սխեռներ, Ղույ-
լասարի ծուխն ընդհատ-ընդհատ դուրս եր խուժում
ներա՝ կապույտին տվող հաստ պոռոնները ու կեռ
քթածակերը ծածկող՝ թավ ու խռիվ բխերի միջից:
Թեև արնաբծերով լեցուն աչքերը սևեռել էր հեռուն,
շատ հեռուն, սակայն յերբեք չեյիր ասի, վոր նա մի
բանի յե նայում, ենքոն անորոշ ու անխոսուն եր
ներանց արտահայտությունը: Մաթոն, վոնց վոր մեկը
համատարած անդորրության ժամին հանկարծ պայթող
հրացանից ցնցվի, ցնցվեց, յերբ մի խոսրոտ ձայն հար-
ցրեց:

— Ձանջաֆիլ ունե՞ս, բիձա:

— Հը...

— Ձանջաֆիլ ունե՞ս...

— Զե...

Հարցնողը հեռացավ: Քիթ Մաթոն լեռնցու խո-
շոր ու ճաքճքված մատներով շփեց կնճռոտած ճակա-
տը, կարծես մտքերը կարգի գցելու համար: Կարա-
կուլի զինվորական խուռնացած ու տեղ-տեղ մազերը
թափված գլխարկը հետ տարավ գլխի գազաթը, աչ-
քերը ձոռեց ու ծույլ ծույլ վեր կացավ յուր խսիրա-
ծածկ աթոռից:

Ե՛հ, հերն անիծած— քթի տակ փնթփնթաց ու

աջ ձեռքը ողում կտրուկ թափ տալով, վերցրեց դարակից խշխշան ճերմակ ճանճաքիշը ու մրգեղենի վրա կիտված աներես ճանճերին սկսեց խոփել տալ: Դա մի անհուսալի փորձ էր, վոր արեց Քիթ Մաթոն: Ելի մտքերը, վոնց վոր թոնդրի մեջ կախված կաթասայի ջրում թռչկոտող սիսեռներ՝ հուզեցին նրա ներքին աշխարհը:

* *

Են թաղում ով չեր ճանաչում Քիթ Մաթոնի: Յերբ մեկն ուզում էր ժամադրություն նշանակել, հարմար էր գտնում մանրավաճառ Քիթ Մաթոնի փոքրիկ խանութը: Յերբ մեկն ու մեկին՝ կառավարական ծառայողները պաշտոնական գործ բռնելիս հարցնեյին թե՛ վոր փողոցումն է ապրում, կասեր՝ Քիթ Մաթոն: Փողոցի իսկական անունը համարյա դժվարամարտելի էր դարձել թաղեցիների համար: Քիթ Մաթոնի փողոց անունը լավ էր ու բոլորին ծանոթ: Դատարանում գործ լինելիս, թաղեցիները, իբրև վկա տանում էյին Քիթ Մաթոնի: Քիթ Մաթոն քանիսի՞ յերեխաների կնքահայր է յեղել, քանիսի՞ խաչյեղբայրը: Մարդիկ, յերբ իրենց ասածները ուզում էյին ավելի հաստատուն ու համոզիչ դարձնել, որինակ էյին բերում Քիթ Մաթոնի: Են թաղում ով չեր ճանաչում Մաթոնի: Դասն վեց տարի, հ՛ը, հեշտ է ասել, խորը մտածեք տեսեք է՛, հապա՛, քսան վեց տարի եդ փոքրիկ խանութում առևտուր է արել: Միշտ միևնույն հաստ-հաստ, սևացած ու փառակալած դարակները, կոտրված պահարանը, կարճ ու յերկար, հաստ ու բարակ շշերով լեցուն: Շշերի վրա ճկուտի չափ անխուսափելի փոշին, ասես, քսան վեց տարի

ժակի չի սրբվել: Դարակների վրա՝ միշտ մի քանի հետ եփանանոց ծխախոտի տուփ, մի չորս հատ դանազան ձևի բանկա, են ել ծրտոտված: Բանկաների մեկի մեջ՝ մի հինգ բոռ բրինձ, մի ուրիշի՝ մի եդքան ել աղ, յերբորդը՝ ասեղ, թել, կանեփ, լեղակ: Մի իրեք հատ «Ժակո»-ի մազ, ձեռքի «Բողլո» սապոն: Դախի վերևը, յերկար թելից կախված ու թիթեղե լարերով հյուսված զամբյուղի մեջ մի տասը հատ ձու: Կողքին՝ տառելի—ձուկ: Ես եր Մաթոնի խանութի ներսի շեշուղը: Հին մուշտարին խանութի հարուստ շեշուղին կարոտ մնաց: Մի քանի անգամ հարցրել է.

—Մաթո ջան, յերբ պիտի շեշուղ բերես դուքանդ, ախր պահանջ կա:

—Տանը շատ ունեմ: Հենց վոր մի բանի պահանջ ա լինում, եքսի որը բերում եմ: Դուքանը իրա չափ ու սահմանը պիտի ճանաչի, ես դուքանին, ես կըսազի: Չափ ա, բա... Համ ել ետրվա որը շատ ապրանքով դուքանն: յերեքանել լավ չի: Մեջ տեղը հաշիվ կա,—կասեր նա՝ աչքերին և ունքերին խորամանկ խաղ տալով:

Մրգով նրա խանութը չափազանց առատ էր լինում: Ամառը՝ թարմ-թարմ ձմեռը՝ չոր-չոր: Կանաչին, բողբո՛ իր ժամանակին՝ բույ: Մենակ ես հո չեր, պահե՛, բա խանութի դարդարմնքը: Հրեն, թեև հնացած ու մաշված, բայց սիրուն են պատկերները, վոնց վոր Մաթոն կասեր, խանութին համ ու լազաթ տվող պատկերները: Ահա առաջինը. թիկնեղ ու առնական խանը՝ հատակին զցած ալ-կարմիր գորգին հպարտ-հպարտ պառկած՝ գլուխը դրել է թավշապատ բարձե-

բին: Իսկ կողքին գեղեցկորեն ձգվել է սիրունատես սևաչյա, ցորնագուշն հարճը ու տարփոտ համբուրում է խանի ճակատը: Ահա յերկրորդը՝ շուրջպարի յեն բռնել թվով ութ արեկեցի կին, իսկ նրանց մեջ, առանձին նազանքներով. սիգորեն ու վոլորուն պարում է քողածածկ Ֆաթման (պատկերի տակ պրված էր «Ֆաթմաի պարը»), չարաճճի ժպիտներ շաշվելով ընկերուհիներին: Յերրորդը՝ մի յեվրոպացի «Եյնեմ» ֆարերիկայի դրոշմանիշը ձեռքին վազում է: Եսպիս մի քանի հատ, կողք կողքի, վորոնք չգիտես, յերբ կամ ինչպիս են ընկել Քիթ-Մաթոի ձեռքը: Սակայն յերկու բան ունեն, վորոնք նա ամենայն յերկյուղածությամբ ու խնամքով եր պահում: Գա «աստվածաշունչն» եր, աշխարհաբար «աստվածաշունչ»-ը, վոնց ինքը կասեր—ֆարմասինի «աստվածաշունչ»-ը: Սիրում եր հետ միջորեի արևի ժամանակ, յերբ փողոցը, մի տեսակ, խաղաղվում եր, կարգալ Սողոմոնի «Յերգ-յերգոցը»: Եսաստուն խոսքեր կան, կասեր նա հաճախ ու լեզուն կը չիչիացնեն: Մին ել՝ հնածին հաստափոր դավթարը, ապառիկներին հատկացված դավթարը, վորի մեջ տասնյակ անգամներ պրվել խաղաղվել ու ջնջվել է մուշտարիների հաշիվները: Ախ, եդ մորիսի նման շուտ բաղմացող հաշիվները, վորոնք, ծրար-պրտի հաշվետվությունից փախչող մուշտարիներից թաքուն, գլորվելով-գլորվելով դառնում ենին կոկիկ, կլորիկ, չաղիկ թվեր: Անդեն, բայց զորավոր, համեստադեմ, բայց մեղքի տակ տնքող դավթարը, վորը ե՛ հարգանք ե՛ ատելություն եր ձեռք բերել մուշտարիների զանազան խավերից: Քսան վեց տարի եսպիս են յեղել Մաթոն ու իր փոքրիկ խանութը:

*
* *

Իսկ են որը, յերբ վոնց վոր թեթ թոնդիր լիներ, Քիթ-Մաթոի մտքերը, ասես, թոնդրի մեջ կախված կաթսայի փլթփլթոզ ջրում թռչկոտող սիսեռներ, եդ որը սիրտը մի քանի անգամ վեր, շատ վեր բարձրացավ, փքվեց, ուզում եր պատռվի: Մաթոն ճիգ եր գործ դնում զսպելու ներքին խռովարկուն, կրծտող ու չանգոտող խռովարկուն: Յերբ թաղի հասասը խանութի առաջ կանգնեց ու սկսեց խաղողի լավ ճիթերը ջուկել, Քիթ-Մաթոն անխոս ու արագ մոտեցավ նրան ու թևից բռնած՝ ներս սարավ: Նրա դեմքի ջղաձիգ արտահայտությունը շփոթեցրեց «Փիթի կճուճ» հասասին:

—Դուզ ա, թե հենց ընենց...

—Ի՞նչ...


—Են ելի, ինչ ես ծածկում...

Հասասը տարակուսված թոթվեց ուսերը:

—Դու պիտի իմանաս, ել ինչ հասաս ես: Մի քաշվի, տաա...

—Յա... ախր ինչ կըսես, ինչ կը հարցնես, չեմ հասկանա, -ավելի զարմացած ու մի քիչ ել վախեցած պատասխանեց հասասը և ձեռքը Մաթոյի ձեռքից ուզեց ազատել: Յավացնում եր:

—Կոպերատիվը—մոնչաց Մաթոն ու հասասի ուսերից բռնեց և այնպես թափահարեց, վոր նա, յերբ բաց ընկավ, հետ-հետ գնաց ու կպավ դարակներին:—Ծածկում ես, քաշվում ես, խղճում ես, ինչիս ե պետք քո խղճալը: Թշնամու ջանը կը դնջանա, պրծավ, գնաց: Նրանք են մեղավոր, սարքել են, կեղծիք կա... Նախանձոտ շան տղեք... Հըլա սպասեք...



—Յն...—տարրորինակ ձայնեց հասասը ու դուրս
յեկավ: Նրա կրկնակի դարմանքը մի ակնթարթում
ավերել եր արեառ դեմքի սովորական տեսքը:

—Ի՞նչ ես շշկլված շան պես նայում ինձ: Ծած-
կում ես: Ինձ դասար Հակոբն ասավ, հապա: Տեղներս
կոտպերատիվ են բաց անում: Յեկել են, տեսել, հա-
վանել տեղը, հասկանում ես: Տններս պիտի քանդվի,
իմացամբ...

Ու ձեռքով հասասին շտապ հեռանալու նշան
արավ:

*
* *

Հետևյալ որը Քիթ Մաթոն անհնազանդ վոտ-
քերով բարձրացավ Գործկոմի ծուռ ու մուռ սան-
դուխքներով: Ձեռքին պինդ սեղսել էլ մի մեծ թուղթ:
Մոտեցավ առաջի դեղնադույն դռան մոտ կանգնած
մի փոքրիկ տղի.—

—Նախագահի տեղը վորտեղ մ...

—Վերև...

Նախագահի սենյակի առաջ բազմաթիվ սպասող-
ներ կային: Կողքերին կանգնեց: Ջանը, ասես, սըր-
սրթում եր: Մաթոնի թվում եր, վոր յերկու բան ակա-
ջին փսփսում են, մինը՝ բան չի դուրս գա, դուր հույսեր,
սուտ ա, բան չի դուրս գա, ավելոր ջափա քաշել ա,
հետ դարձիր: Մյուսը՝ գնա, գնա, դայիմ կաց, ներս
գնա, կը լսեն, շուտ, հետ մի ընկիր: Մինչև Գործկոմի
դուռը քանի անգամ եր կանգնել ճամբին: Մեկ նրա
դեմքը պայծառանում եր, սիրտը պնդվում, վոտքերն
ու մեջքը շտկվում, մին էլ հանկարծ՝ թուլանում, խեղ-
ճանում: Ծնկները ուզում էին ճաքի: Եսպիսի տան-
ջանքով նա հասել եր մի կերպ մինչև Գործկոմի
շենքը: Անհանգիստ հայացքով նայեց սպասողների
դեմքերին: Վոմանք մեղմությամբ զրուցում էին,
վոմանք էլ միայն ծխում ու լսում զրույցը: Ուզեց
խնդրի նրանց, վոր առաջին հերթը իրեն բաշխեն,
գործը շատ ա վազ, մին էլ՝ չե, ամոթ ա, կարգ կա,
որենք կա, վոնց կընի, սրանք էլ մեծ գործ կունե-
նան, թվ ա իմանում, պիտի համբերել, կարմիր կոճի
հո չի: Նայեց, խորը նայեց նրանց նորից, վոտից
դուռի չափեց: Սպասողների դեմքերն ավելի հանգիստ
էին, անվրդով, շատ անգամ ծիծաղում էին, հանաք
անում: Չե, սրանք Մաթոնի դարգից չեն ունենա,
Մաթոնը ծեր չունի, սե ա սե: Բոլորի դարդը իրա
վրա կվերցնեն, բայց ես մեկը, ես խորն ու կրծողը
սրտից առնեյին, դեն շարտեյին:

Քսան վեց տարվա տուն ա քանդվում, քսան
վեց, անունն էլ հետը, պատիվն էլ... մասխարություն

« չի... Մտքով սլացավ շահանակագուշն դռան միջից ներս... Տեսնես նախագահը հալեվոր ա, թե չե, Հալեվոր լինի, դարդը կը հասկանա, ջահեն՝ անսիրտ ա, անջիգյար, անփորձ: Իսկ յիթե մերժեն, ծիծաղեն... Ձե, չե, չե... Թաղի խնդիր ա, ժողովրդի պահանջ, քյասիր-քյուսուրի ձեն, վճնց կըլինի, չե, սրանք մի լավ բան ունեն, եզ ժողովրդի ցանկությունովը ժաժ գալն ա, վճնց կըլինի... Ու նորից սրտապնդվեց, ուղեղն, ոսես, հավաքվեց, կորացած մեջքը դրստվեց, ղուլլասարը հանեց, փաթաթեց ու սկսեց ծխել: Ծուխն ել, մի տեսակ, սիրտ տվեց...

— Բիձա, քո հերթն ե...

Մաթոն չոր-չոր հազաց, բեխն ու յերկար մորուսը մի թեթև սղալեց և ներս մտավ: Հայացքը սենյակում մի արագ շրջան գծեց ու հարեց հանդիպակաց պատի մոտ նստած մարդուն, վորը գլուխը դեպի խառնիխուռն թղթերով լեցուն սեղանն էր թեքել ու կարդում էր: Թուղթը մեկնած՝ անձայն մոտեցավ:

Նախագահը գլուխը բարձրացրեց, անմիջապես թուղթը վերցրեց ու սկսեց կարդալ: Քիթ Մաթոն սպասումի լարվածությամբ ու պիշ-պիշ նայվածքով հետևում էր նրա դեմքին:

Հանկարծ՝

— Կոոպերատիվի ներկայացուցիչները նայել են այս խանութների տեղերը:

— Հա...

— Դե, յերբ նրանք հարմար են գտնում տեղը, ի՞նչ կարող ես անել: Իսկ մեզ համար ել ամենակաշեռը՝ կոոպերատիվ խանութն ե, ես ովքեր են ստորագրողները...

— Թաղեցիները, քյասիր քյուսուր մարդիկ...


— Խանութների տերերն ովքեր են...

— Մինը յես...

— Հա... բա ես հանրագիրը ստորագրողները չե՞ն հասկանում, վոր ձեր տեղը կոոպերատիվ խանութի համար շատ ե հարմար: Թաղի եզ մասը լավ ժաժ ճանաչում: Իսկ և իսկ հարմար ե: Ձեր ցանկացած տեղը թաղի վերի կողմը չի՞...

— Հա...

— Բա նա առևտուրի տեղ ե... իստակ ֆեսս անեղու տեղ ե: Կոոպերատիվը բացում ենք, վոր գործ



տեսնենք, թե՞ դեռ չլինած՝ քանդենք... Քյասիր-քյուսուրն իր շահը լավ չի հասկացել... Ձե, չեղավ:

— Ձի լինի, — Բիթ Մաթոն ձայնը կերկրաց:

— Ձե, — կտրուկ շեշտով պատասխանեց նախագահը,

Յերբ Մաթոն դուրս յիկավ, թվաց, թե իր վոսկորները փշուր-փշուր են յեղել։ Ականջները, միտեսակ, խշշում եյին։

Թշնամու գործ ա, թշնամու սարքած—շարունակ կրկնում եր նա մտքում, ավելի ու ավելի համոզելով իրեն։

*
*
*

Թարմաշունչ իրիկուն եր։

Ճոճաւան դուռը շրխկոցով բացվեց ու ներս նետեց իրեն Գիթ Մաթոն։ Լամպայի առատ լույսը վողողել եր սպիտակ կավով ծեփած սենյակի բոլոր կողմերը։ Բաց պատուհանի մոտ դրված սեղանի գլխին առոք-փառոք բազմել եր անփայլ հեշտայեռն և ախորժիկի թշնամ եր։ Մաթոն ամառային գջլւտված վերարկուն շարտեց թախտի վրա ու լուռ մտեցավ իր մշտական աթոռին։ Դռան արտասովոր շրխկոցը ու Մաթոնի լռությունը վախեցրել եր Սոնա-աղուն, —կնոջը և զարմացրել գեղեցկադեմ ու գանգալահեր տղային, վրոնք մինչ այդ, առաջինը՝ դուրս գալիս յեր գործում, իոկ յերկրորդը՝ մտքով գիրք կարդում։

Լռությունը խզեց Սոնա-աղին։

— Մաթոն ջան, ինչ յեղավ վրո...

Մաթոն անմիջապես չպատասխանեց։ Գլուխը գրեց ձեռքերի մեջ, թեյ պահանջեց,—

— Զեղավ...

— Ի՞նչ ասին վրո...

— Ասին ելի... դուրս չի գա...

— Պատճառը...

— Եհ... — ձայնը դժգոհ ձգեց Մաթոն... — Գլուխ չի գա, ասին տեղը հարմար ա...

— Վալ... քուռանամ ես...

Ու նորից տիրեց կարճ լռություն։ Յերբ Սոնան խորունկ հոգոց քաշեց, Մաթոն, ասես, ծլունդ յեկավ, խեթ-խեթ նայեց կնոջը ու վրա պրծավ։

— Հերիք, հերիք մաշես ախ ու վախովդ, մախկտուր սրտիս ե... Ի՞նչ ոգուտ ախ ու վախդ, ի՞նչ ոգուտ, թշնամիս տունս ա քանդում, դուն ել սիրտս...

— Այ՛, հողեմ քո թշնամու գլուխը, հ՛ը... — բարձրաձայն գոչեց Սոնա-աղին ու գուլպայի թելի կծիկը սկսեց պատ տալ։


Թեյը Մաթոնին դուր չեկավ։ Բաժակը հրեց, աթոռը մի կողմ քաշեց ու սկսեց վտանների դուրս հանել։ Տղան, վոր մինչ այդ ուշադիր հետևում եր հոր շարժումներին, գիրքը ծալեց ու դարձավ նրան։

— Ի՞նչ ես եղբան մտածում, յեղավ-յեղավ... ապրելու ուրիշ հնար չկա...

Հարցը Մաթոնի համար միանգամայն անսպասելի յեր ու հարվածող, նա կռացրած գլուխը հետ դարձրեց, ու, մի տեսակ, վոչխարային հայացքով նայեց տղային և կամացուկ շնջաց։

— Դե, իհարկե, կարծես, ապրելու ուրիշ հնար չկա։ Մարդ հղքան ել պառավ կնկա նման մտածի...

Մաթոնի գլուխը, ասես, մեկ անգամից վժժաց, զնգզնգաց։ Ձեռքից վայր ընկավ յերկաթանման վոտնամանը ու անուշիկ թափով թռավ դեպի տղան։ Տղան՝ հանկարծակի յեկած՝ մի աղնթարթում հետ դարձավ դեպի պատը։ Հոր լայնորեն բացված ու, կար-



ծես, շիլ-շիլ դարձած աչքերը և մոր սուր ճիչը մի պահ սարսուռ ներշնչեցին նրան

— Լակոտ, շան լակոտ, վա՛նց չմտածեմ, վա՛նց չմտածեմ... Դձու պիտի պահես տունս, դձու պիտի քու ծառայութեամբ պահես մեզ... Կողքերդ հաստացրել ես, ընդունը յետ ըտենց խոսում, դձու ապրելու ուրիշ հնար գիտե՞ս, այ չկամ խզի ձագ... դու յել ես ինձ թշնամի...— ու ծանր, շատ ծանր մի բռունցք իջավ տղայի գլխին: Սոնան մի վոստյուն գործեց և ուժգնութեամբ հետ կասեցրեց Մաթոնի: Սկսեց խանդաղատանքով շոյել տղայի գլուխը:

Տղան հանգիստ՝ մոր ձեռքը հետ քաշեց ու քմծիծաղով նայեց հորը, ապա պոռակաց.

— Նսկելով բան չի դուրս գա, ճար ունես, ուրիշ բան տես, ուրիշ տեղ գործ արա, կամ թե չէ, հենց ինձ նման ծառայութեան մտիր, վաստակդ ել հալալ կը դառնա, թե չէ կոռպերատիֆն ենտեղ պիտի լինի, հարկավոր բան է, ինչքան ուզում ես պատվի, մեկ է, վորոշված է, պետք է բաց անել: Կոռպերատիֆի մոտ քո խանութը հեյ-հեյ...

Մաթոն գժվածի նման վազեց դեպի վոտնամանն ու այնպես շարտեց, վոր ինքն իր հարվածից հանկարծ զարգանդեց: Կնոջ սրտապատու աղաղակը մեկեն ցնցեց նրան ու հասակով մին տապալվեց գետին: Սոնան ու տղան վազեցին դեպի Մաթոն: Հարեանները շնչահատ ներս ընկան: Աղվուկ, իրարանցում, շփոթ: Զուր խմեցնել, պլխին թափել: Յերբ Մաթոն ուշքի յեկավ, ապուշ ապուշ նայեց չորս դին ու գլուխը թռչլ կախեց կրծքին: Հարեանները տարակուսանքով դուրս յեկան սենյա-

կից: Բաւում նրանք խմբված դեռ յերկար ժամանակ քննում էին ու մերթ ընդ մերթ նայում դեպի Մաթոի տան պատուհանները:

— Ո՞վ արեց...

— Տղեն կլի ելի...

— Չե, տղան մարդավարի տղա ա...

— Բո՛ո, բա եդ տեսակ տղա կլի:.. Հլա ինքն եդ պատկոմ ա: Իմ տղան ել ա պատկոմ, համա աղը եդ պես բան չի անի, տղա ա ելի... Թագա ձագ ա, կը չանգոր:

— Կնիկը կլի, կնիկը...

— Եե, բան ասիր...

* *

Որեր կան, վոր կարծես տարիների նման յերկար են: Քիթ Մաթոյի համար են հինգ որն ենքան եր յերկար, միորինակ, մուրտառ, ասես, բնությունն ել իր հերթին ծաղրի յեր յինթարկում Մաթոին, ու վոնց վոր բուրդի՝ դես շարտում, դեն շարտում և յերեխայի նման քրքշում:

Մեղրամոմի նման հալվեց Մաթոն, ծռուկտվեց: Են մարդիկ, վորոնք մի ամիս, ամիս ու կես չէին տեսել Մաթոին, հենց վոր հանդիպում էին, «պահո, տնաշեն, եդ ինչքան ես փոխվել, քիչ քիչ չճանաչեյի», ասելով պինդ սեղմում էին նրա ձեռքը: Քիթ Մաթոն պատասխանում եր միայն տխուր ժպտով, ակամա ժպտով:

Հինգերորդ որը, կեսորին, սրընթաց մեքենայի նման խոտոդ մեկը կանգնեց Քիթ Մաթոի խանութի առաջ: Ներսը մի լավ նայեց ու հետո սկսեց նրա հարևան խանութները դուրս ու ներսից

զննել: Մաթոն գլխի ընկավ: Նրանցից ե: Յիրբ զննողը ծայրի խանութից դուրս յեկավ, խանութների տերերը, դերզի Գաբոն, դասաբ Ակոփը, փինաչի Մուկուչը, ղիյչի Սեթոն հավաքվեցին նրա շուրջը: Մաթոն չմոտեցավ: Մի քիչ սպասեց ու ապա մատով արեց: Չննողը և խանութների տերերը մոտեցան:

— Գործ ունեմ սրա հետ, զուք հըլա սպասեք— դարձավ Մաթոն իր հարևաններին: Հարևանները կապածամիտ հեռացան:

— Ի՞նչ կա...

— Յէրբ եք գալի...

— Դեռ խանութները պիտի նորոգենք:

— Շատ կքաշի...

— Մի ամսից կը վերջացնենք:

— Բոլոր խանութները վերցնում եք:

— Դժվար: Քոնը մի քիչ կասկածելի չէ:

— Հո՞ւ— ուրախության մի շեշտ նշմարվեց Մաթոի ձայնի մեջ:

— Բան ունեմ ասելու...

— Չե, հենց ընենց...


Չննողը ներողամտաբար ժպտաց ու հեռացավ, Իսկ Մաթոի սիրտը թրթռաց, թրթռաց, ասես դանդաղ նման վոստովոստաց:

* *

Վոնց վոր արձաթե մանեթը վերցնես ու սալա հատակին զրնգացնես, ենենց ել կոտպերատիվ խանութը զրնգաց, յերբ են թաղում, Մաթոի դուրանի կողքին բացվեց: Զրնգաց զիլ ու հնչեղ: Թաղի

1001
2584





դճանքը, մի տեսակ, յետոց, վզզոց... Գնորդների մուտ և յիջը քանի գնաց արագացավ, ճուղավորվեց: Գորշ մոխրավուն խանութի ներսն ու դուրսը դարձավ կատարյալ մրջյունանոց, ժրաշան մրջյունանոց: Փորձիր յերեկոյները դնալ են թաղը, ուր գորշ մոխրավուն չորսմուտքանի խանութն և գրանվում, կտէսնես, վոր նրա ներսն ու դուրսը ծփում, ծփծփում և ենպիսի լույսով: ասես, տոն և, հրավառություն: Վիտրինաները, կարծես, տոնական գույնզգույն զարդարանքներ լինեն ժապավիններով փաթաթված, ենքան գեղեցիկ են, չքեղ: Սիփսպիտակ յերկարավուն խալաթներ հագած գործակատարները, ասես, ավտոմատ մարդ-մեքենաներ լինեն, ենքան հագճեպ ու չափած-ձեւած են աշխատում: Մեկ, յերկու, պատրաստ, մեկ, յերկու, պատրաստ: Ենպես էր գորշ մոխրավուն խանութը, վորի կողքին՝ փսնկոտ ու ալարկոտ դարվիշի նման՝ պըպզել էր Բիթ Մաթոյի դուքանը:

* *

Լավ եմ հիշում, են որը կիրակի յեր:

Արեւ կար դեռ: Թաղի վաղեմի ծանոթ-ծնութիւրը Բիթ Մաթոյի հրավերով հավաքվել էյին կոպեքատիվի զիմացի կիսաքանդ պատի առաջ: Մաթոն դեռ չէր յեկել: Մակիչը, վոր մի չեչոտ դեմքով ու պըլզած աչքերով միջահասակ մարդ էր, ներկա յեղող ծերերի վրդովմունքի պատճառ յեր դառել: Խոսակցությունն ավելի տաքացավ, յիրը Մակիչը կծու ծաղրանքով դիմեց հաստ ձեռնափայտին կոթնած Սաքի ապօրը.

— Ենպես ես խոսում, կարծես, Մաթոյի ապեկունը լինես: Զ'լինի՞ տալիքդ քեզ ա բախշել... Մաթոն, վոր

մի քիչ խղճմտանք ունենար ե՛ր, հնքան գոլաժա տո-
կոսները չեր գա փոխառնելիք փողի վրա... Իսկ դու ելի-
քո հալից ընկած, ճլորված դհոլին ես խփում՝ թե նա
քյասիպ-քյուսուպին ոգնության ա հասել, նեղ որից
փրկել... Արար աշխարհքի աչքը բացվեց, հլա քունը
փակ ա...

—Ե՛հ, Մակիչ, չանա ես տալի, մարդ ել ըտենց
խոսի—ընդհատեց մեկը:

—Խի, գուզ չեմ ասում... Ասում ա կոռպերատիվի-
դիմաց Մաթոնի ոգնությունն ավելի լավ ա, ավելի
բարձր... վոնց չե, Մաթոն սուս-փուս խեղճերի կաշին
քերթի, տոկոսներով ու բաց թողած նիսյա ապրանքի
մեծ-մեծ գներով բկիտ չոքի, ու հետ վեր կենանք,
ասենք, թե կոռպերատիվի դիմաց նրա ոգնությունն
ավելի լավ ա... Ընդուր եյիւր համախոսականը ստորա-
գրել... հլա սպասեք...

—Ի՛հ, բան չունես...

—Հա, հա, դրուստ ա ասում Մակիչը—հաստատեց
մի ուրիշը:

—Ուրանում եք, նրա քյուլփաթին հվ ա հաց տը-
վել քաղցի տարին, Մաթոն, հրես, հրես ես մեկելին,
ծվ ա միջոց տվել վոտի վրա առուտուր անելու—Մա-
թոն, հլա խոսում եք— գայրացած մատնացույց արա՛վ
Մաքի ապին:—Տնաքանդներ, ձեր դատը հետո կտես-
նեք, հլա թող տոկոսները տաք-տաք հավաքվի, Մաթոն
մի վայ կապի ձեր ջանին, վոր Սողոմ-Գոմորից բեթար
ըլի... ափաշկարա գողությունը հետո կտեսնեք, սպա-
սեք... Առարկեց զգալումս՝ Վասիլը:

—Տեսնեք եսոր ինչ բարին ու խերին՝ ա հավաքել
մեզ եստեղ—վրա բերեց Մակիչը:

—Բո՛ո...

—Բա ին՞չ եք կարծում... Սուրբ Գրիստոսի նման
դիփիս բարեկամա ձեվանում... Յես կմոռանամ Վրթա-
նեսանց կարոնի գործը, խեղճը մազ եր մնում աքսոր
գնա, մոռացել եք...

—Եդ պարզ բան չի, հայտնի չի հվ ա մեղավոր,
հա՛մ ել անցած գնացած բաներ են, թագեն ասա,
թագեն— քմծիծաղով պատասխանեց Մաքի ապին:

—Տղերք, սուսարեք, Մաթոն գալիս ա, լավ չի—դար-
ձավ զրուցողներին յերեսը մազի մեջ կորած մեկը:

—Խի, վախում եմ...

—Սուս, Մակիչ...

Մաթոն ծանր-ծանր մոտեցավ խմբին: Մատխոն եր-
Շրջահայեց:

—Բար իրիկուն:

—Ա՛յ ա՛ստու բարին...հ՛ը վոնց ես, ելի դմբդ—
մեղմությամբ հարցրեց Մաքի-ապին:

—Կանք ելի... Տղերք ըսոր հարմար գտա ձեզ հետ
մի քիչ խոսել, ներեղություն կանեք, վոր անհանգիստ
եմ անում... գիդաք ինչ կա, ասված ա, «սարը սա-
րին չի ռաստ կա, համա մարդը մարդին ռաստ կգա...»

—Դուզ խոսք ա...

—Հա, դե միտքը հասկանում ենք ելի... Ըսենց ա... դե,
իհարկե շնորհակալ եմ ձեզնից, ինձ ցույց տված
պատվից, ընկերությունից, նեղ որիս ոգնել եք, լենն
ել,դե, միասին ենք յեղել... Ըսենց ա... ես կոռպերա-
տիվը բաց արին... լավ... մեր գործերն ել խարաբ
յեղավ... Ինձ պես մարդկանց համար ասված ա. ուրա-
խանաս, ուրախանաս, վերջն ել լաց կլինես, ասված
խոսք ա ելի... հիմի իմ լացի տարին ա... հալբաթ թըշ-

նամիս լափ չխղճաց ինձ... պարզ ա, ըսենց յեղավ...
Թող կոոպերատիվն ել իր արևի ձենն ածի... դե, չիք
բարիք, առանց չարիք... ես ել մեր պապերի իմաստուն
խոսքնա... հիմի ընկել եմ ընենց նեղ որ, վոր դուք
պիտի ինձ մեկ անգամ ել ոգնեք... ձեզ վրա յեղած
պարտքերս հավաքեմ...

—Այսինքն...

—Վճնց...

—Բո՛հ...

—Հենց հիմա...

Մակիչը փոթկաց:

—Հա, չունքի դուքանս ուզում եմ բոլորովին կողպել...

—Դե զոր առուտուրս պակաս ա, ձեռքս ել հետը, միտք
չունի պահել... ըսենց յեղավ... Թշնամիս ես եր ու-
զում... դուզա, ձեզ համար շատ դժվար կլինի, համա
ինչ անենք... կոոպերատիվը համ լավ ապրանք ա
ծախում, համ եժան, ուժս նրան հասնիլ չի, դե գիտեք
եկի...

—Բա վճնց անենք...

—Ետ չյեղավ...

—Ուրիշ ճար չկա...

—Ծանր... ճար կա, համա սրտով պիտի կպչենք
եղ ճար անելուն: Մաթոի աչքերը պսպղաց:

—Եդ թնչ ճարա, ասա, տեսնենք, ուժիրիցս դա
կանենք...

—Մուշտարիքը իրենց վոտի ճամփեն դորձրին դե-
պի կոոպերատիվը...

—Բա, վճրտեղ դարձնեյին—հարցրեց Մակիչը հեզ-
նանքով:

—Կաց, այ մտրդ...

—Հա, ես ա ճարը, թե թաղի մուշտարիքը ինձ կը
պահեն, ես ել դուքանը կպահեմ, չե՛ կկողբեմ... մենաէ
ես ա ճարը:

—Յանի թե կոոպերատիվ չմտնենք ելիմ—հարցրեց
Մակիչը հուզված:

—Վոնց կուզեք, հասկացեք... եղ ձեր գործնա...

—Նամարդություն ես ա՛նում, Մաթո—աղաղակեց
Մակիչը:

—Սուս, տեսնենք վերջը...

—Մաթոի միտքը փիս չի...

—Նամարդություն ա, ես ել փիս նամարդություն,
մենք մեր լավին քացի կտանք, խելքներդ կորցրել
եք... սի անգամ խաթրչու դուք համախոսական ըս-
տորազրեցիք, վերջն ել խայտառակվեցիք... Որենք կա,
կարգ կա, անտիր աշխարհք հո չի...

—Ձենդ կտրի տեսնենք ե...

—Այ ափաշկաբա գողությունը, այ մուրտառու-
թյունը, ես ել ձեր Մաթոն...

—Բոլա, յախներս աղատի, այ Մակիչ...

—Որենքի առաջ պատասխան պիտի տա Մաթոն,
եդ բանի համար...

—Իհաբիլ ե...

—Ամոթ ա...

—Ոձի կծոցա...

—Ախմախ, ախմախ միք դուրս տա...

—Պարտքերն առնելովն ա մեզ վախեցնում...

—Ամոթ ա, սուս արեք, խալիը թնչ կասի... կամ-
աց խոսեք...

—Վճնց թե կամաց խոսեք, պիտի բղավենք... մե-
թըն ա աշխարհքը...



—Բա յես չեյի ասում, վոր ձեր սիրած Մաթոն-
ան խիղճ ա, աննամուս — դարձավ Մակիչը ներկանե-
րին:

Մեկ ել հանկարծ Մաթոն հավաքվածների շղթան
պատռեց, վազեց դեպի Մակիչը ու մի ուժեղ ապտակ
հասցրեց նրան:

Տեսարանը ցնցեց: Բոլորն իրար անցան: Մակիչի
կողմնակիցները բռնեցին Մաթոնի շնքիցը ու հրեցին,
Մակիչը հայհոյանքով թռավ դեպի Մաթոն:

Ոտար մարդիկ միջամտեցին:

—Ընկերներ, չի կարելի... Ձայնը խլացավ:

—Յես դրա վաշխառու հերն անիծեմ...

—Ընկերներ...

Աղմուկը հասավ իր գազաթնակետին: Բազմությու-
նը քանի զնաց մեծացավ:

—Միլիցիոներներ...

—Թողեք յես դրա հերն անիծեմ, դադել ա մեզ...

—Ընկերներ...

—Չի կարելի, անթույլատրելի յի փողոցում...

—Միլիցիոներներ...

Հեռվից լսվեց միլիցիոների սուլոցը:

* * *

Աշխարհքում, յերբ մի մեծ բան ե կատարվում, ա-
սենք պատերազմ, եղ պատերազմ բռնկվելու առաջին
լուրը վաճեց կտարածվի ժողովրդի մեջ, գիտենք, չե՞...
Ճիշտ մեծ պատերազմի պես բռնկվեց ու մի շնչում
տարածվեց թաղում են, թե Գիթ-Մաթոն գուքանը
ծախում ե: Ջարմանահրաշ բան, Մաթոն գուքանը
ծախի, խորհրդավորությամբ հարցնում եյին մի-
միանց թաղեցիները, ստուգում, հավաստիանում ու

ապա յուրաքանչյուրը յուր պարտքն եր համարում
յեռանդապին փնտրել մեկն ու մեկին ու շտապ հա-
ղորդել լուրը: Թաղեցիներին մեկը, մի որ հանաքով
ասավ, վոր ինքը քիչը-քիչը մի հիսուն մարդու ասած
կլինի: Յերեմի էս եր պատճառը, վոր լուրը Թաղեցի-
ների բերաններում առատորեն սննդվելուց ու ճար-
պակալելուց հետո՝ ձանձրացավ նրանցից ու համառու-
թյամբ ճեղքեց Թաղի պատնեշը և սողոսկաց հարեվան
Թաղերը: Չորորդ Թաղում Բիթ-Մաթոն ու յուր հինա-
վուրց դուքանը դարձել էյին առասպելական տիտան-
ներ: Ովամիսներով վոտը չեր դրել Մաթոնի փողոցը,
վոտը դրին, տեսնելու, թե խոր վճնց յեղավ ե... Իսկ
Մաթոնի մոտիկ մարդկանց դրությունը, նման եր...
վճնց ասենք... հը... ասենք մինը միանգամայն ա-
նըսպասելի մեռել է, ու նրա մոտիկ, հեռավոր
բարեկամներն առաջին անգամ գնում են մեռլատուն,
ի՞նչ էք կարծում, քանի՞ անգամ պիտի մտքում
չափեն-ձեվեն են, թե վճնց մխթալեն մեռելա-
տիրոջը: Ի՞նչպիսի խոսք ասեն, վոր հարմար լինի,
վատ չլինի, տեղին լինի, հիմար չլինի ձիշտ եղպես
էյին մոտենում Մաթոնի նրա մոտիկ մարդիկը: Հար-
ցընում էյին շատ զգույշ, պատասխանում, վորքան
կարելի յե մեղմ, սիրտ տալիս, խորհուրդ տալիս ու
թեթեվ-թեթեվ հեռանում:

Սակայն այդ բոլորին Մաթոն անտարրեր եր: Մար-
դիկ են ելի, անուգուտ ու անշառ կասեն, կխոսեն, Մա-
թոն ի՞նչ կավելանա, կամ ի՞նչ կպակասի: Եդ ել մի
սովորություն է, մի ընդունված ձեվ, կանոն: Մաթո-
ն միայն մի միտք եր տանջում, թե Սարիբեկանց
Գոգորը արդյոք դուքանը կաոնի՞ թե չե, եդ և գլխա-

վորը, թե չե ես մարդիկ, մարդիկ են ելի, անուգուտ
ու անշառ կասեն, կխոսեն... Խոսքը նա յե, Սարիբե-
կանց Գոգորինը, չե՞ վոր նա մոտ չորս ամիս առաջ մի
քանի անգամ լըջորեն դիմել եր Մաթոնի թե՛ դու-
քանդ ծախի, տոնեմ, լավ փող կ'տամ, բայց ինքը
խստու թյամբ մերժել եր՝ առելով, վոր յուր կյանքի բի-
նան ձեռաց քամուն չի տա, թե ինքը վորոշել է հենց
դուքանումն յուր մեղավոր հոգին փչել... Են ժամանակը
գնաց, գնաց գյոզավը—մտմտում եր Մաթոն: Հատուկ
մի մարդու բերնով խաբար եր ուղարկել՝ շրջակա մո-
տիկ գյուղերից մեկում ապրող Գոգորին, թե շուտ գա
ու դուքանը առնի, թե համաձայն է ծախելու: Ու
Մաթոն հույս ուներ, վոր կաոնի:

Մի որ, աբլորականչին, յերբ Մաթոն դուքանը բա-
ցեց, ներս մտավ խոզավիզ մեկը: Գոգորն եր: Մա-
թոն ուրախացած վազեց դեպի Գոգորը ու ձեռքը սըր-
տալի սեղմեց:

—Պահո՛, եկար, այ առտու բարին, բարով եկար,
վճնց ես...

—Հլա արեվի յերես տեսնում ենք, դու վճնց ես...

—Եհ, ձերացել ենք Գոգոր ջան, կարում չենք որի-
նավոր առուտուր անել...

—Հըմ...

—Դե հմի, վոնց վոր կասեն դուքանս քեզ փեշքեշ...

—Դու ջան սաղություն ասա, դուքանը հե՛չ...

—Հա... մեր դրությունն էլ ըսենց ա... մարդ վոր
ծերանում ա, վոտքից ու հալից ընկնում, յերեխայի
նման ա դառնում, մի բան կառավարելու շնորհքից
զրկվում: Ղոչադ ջահելը պիտի գա, հնի տեղը բռնի...
Ես դուքանն ել յերկիր կառավարելու պես բան չա-
ղայով պիտի կառավարվի...



—Դու բաղդ ասա, Մաթո, դուքանը հեշ...

—Սիրուն խոսք եր... հալբաթ մարդիկ ես ուզեցին, վոր դուքանիս ժառանգը դու լինես, քեզ պատկանի, բաղդ ա, բա ի՞նչ ա...

—Մաթո ջան, մի սխալ կա, եդ մարդիկ վոր ուզեցին, ինձ հարցրին... բալքի յես չեմ ուզում... մարդկաց մտիկ մի տուր, Մաթո...

—Ե՛, խոսք եր, ասացի ելի— մեղմությամբ ծիծաղեց Մաթոն ու բարեկամաբար ձեռքով թեթեվակի խփեց Դոգորի ուսին— Չնեղանաս...

—Խի պիտի նեղանամ... դուզն ասեմ Մաթո, հմի դու չնեղանաս, մարդիկ ենք ելի. դուքանն առնելու միտքս թռիկ ա. Գեղից վոտս քցել ելի եստեղի բազարը, մի քիչ բան-ման ունեյի ծախելու, ծախեցի, ասի՝ գընամ տեսնեմ Մաթոն վոնց ա, համ ել խաբար անեմ, վոր հնար չունեմ դուքանն առնել...

—Իստակ բանը խարաբ արիր— ընդհատեց Մաթոն արտատած— Ախր, չե՞ վոր դու ուզում եյիր...

—Դուզ ա, մի ժամանակ, կար են ժամանակն ուրիշ եր, համա հմի՝ ծըծ... Արի ծուռը նստեմք, դուզը խոսենք... ես կողպեցրատիվը վոր չլինեմ, դուքանդ կծախեմ... Մաթո ջան, ախր մենք ել մարդ ենք, խելքներս ծախ խելք հա չի... Մենք ել հեսաբ անել գիտենք. Դուքանդ հմի իսկի լավ հնձի տեղ չի... վորտեղ հաց, ենտեղ կաց, բա չեո իմանում... հնձի տեղը ուրիշ տեղ ա, ե՛ միամիտ ես... Դուքանդ խարաբ ա, փինաչուն կսազի պահել հմի, դու հո փինաչի չես, վոր պատիկ կտրտանքների հետեից ընկնես— խորամանկ ժպտով հայտարարեց Դոգորը

Մաթոն կարմրատակեց:

—Եդ քո բերնի խոսքը չի, եդ թշնամուս խոսքն ա, քեզ սովորացրել են, քեզ խելքահան են արել... Քո միջոցով ուզում են ինձ գցել... Մարդ չեք, մարդ չեք, դուք...

—Ի՞նչ թշնամի լինչ մշնամի, լինչ ես ասում...

—Հա, հա, քեզ կաշառել են... անաստվածներ անխիղճներ... նախանձեցին... արյունս են ուզում, անա վերջունեմ... մազմզոտ կուրծքը կատաղած բացեց— անատար, թող դնջանան, պրծնեն... թող խմեն, կշտանան... Դոգորը զարմացած քաշեց Մաթոին խանութի խորքը:

—Եդ ինչե՞ր ես ասում... Մաթո դու խելոք մարդ ես, կաժկ խառնել ես, ի՞նչ ե...

—Կաշառված ես...

—Մաշալ տուր ասեմ... դինջ խոսենք, բղավելով բան չի դուքս գա... համբերիր...

—Նստեղ հօտաւ—Մաթոն ցույց տվեց կոկորդը.— եշ համբերելու տեղ չմնաց, բոլա, բոլ...

—Սպասիր բանեմ արոււմ... յերեխա խո չեմ, դու գիտես վոր յես քո լալն եմ ուզում, թշնամիս վորն ե ան մարդ... Ինձ դուքանդ հմի ձեռնառու չի... պրծալ, գնաց, թեչն թշնամիս վորնա... զոռով պիտի ծախես... քո թշնամու հերն ել անիծեմ, հլա մեկն ել ալել... Խնչ գործ ունեմ նրանց հետ... յեքա մարդ ես, խրատը դու պտի ինձ տաս, թե յեք քեզ... Ամոթ ա... յես իմ կար ծիքը ասացի, ել ինչ թշնամի... Ինձ, դուզն ասեմ, կթան կուլ ա հարկավոր, ցամաքած ծծերն ինչ գլուխս տամ... զիժ խո չեմ, վոր տաք տեղս թողնեմ ու գամ վնասի տակ ընկնեմ... գեղն ինձ ալելի ոգուտա, քան քո դուքանը, են ել կոռպերատիվի կողքին: Պինդ կաց, Մաթո, չխեղձանաս, աշխարհքը ծուռ ու մուռ ճամփա ա, պիտի կտրես ու գնաս, հեչ չվախենաս... Եհ, շատ խոսեցի, գնամ, ուշացա. բազարում մի քիչ ել գործ ունեմ, պինդ կաց, պինդ... — Ասալ ու գնաց Մարիբեկանց Գոգորը: Իսկ Մաթոն դեռ յերկար ժամանակ կանգնած եր գլխիկոր, անհեշտ, անմխիթար, մեհնակ...

* *

Յերբ Մաթոն վոռք դրեց կոռպերատիվ խանութի շեմքին, աշխատանքներն արդեն դադրելու վրա էյին: Նրա հարցումին, ավագ գործակատարը պատասխանեց, վոր վարչիչը զբաղված ե, տասը բոպեից կազատվի, թող սպասի: Մաթոն կամացուկ քաշվեց խանութի մի անկյունը ու, համարյա, կծկված կանգ առաւ: Նրա դեմքի, մանավանդ աչքերի տակ ծալք-ծալք, իրարու վրա թափված կնճիռները, մանրա-

դրներն դիտողին մատնում էյին յերկարատե տառապանք կրած մի մարդու պատմություն: Խանութի նոր հատակը, պատտառած պատերը, առաստաղը, — անկյունում կանգնած Մաթոն հին ու մտերիմ հուշերը պըրպըրեցին, ծայր տվին... Վորքան սփոփիչ ու անուշ էյին այդ հին ու մտերիմ հուշերը, վորոնք, ուղտերի դանդաղ ընթացքի նման, գալիս, շոյում էյին Մաթոն ճակատը ու գնում, անհետանում... Ահա այստեղ եր միշտ քեֆ անող զասալ Հակոբի տեղը, ահա ճիշտ աշտեղ եր զարդիմանդ փինաչի Մուկուչի տեղը, իսկ մյուս մասում՝ հանաքչի դերզիկի տեղը... Սիրելի դեմքեր, հետաքրքիր արկածներ... Հուշերը չքացան ու պահըտվեցին միայն այն ժամանակ, յիւր վարչիչն արագ դուրս յեկալ դրասենյակից և ավագ գործակատարին մի կարգադրություն արաւ: Ավագ գործակատարը վարչին հայտնեց, վոր անկյունում կանգնած քաղաքացին ուզում ե նրան տեսնել: Վարչիչը մոտեցաւ Մաթոն:

— Ինչ եք ուզում:

— Առանձին գործ ունեմ...

— Շատ լավ, գնանք:

Մաթոն հեռեց վարչին:

Գրասենյակում վոչ-վոչ չկար:

Գրասենյակից Մաթոն նստել, նա շնորհալից ատաղձարկեց Մաթոնին նստել, նա շնորհակալությամբ հրաժարվեց:

— Ինչ կա...

— Ես կոռպերատիվի կողքի դուքանն իմն ե: Դուքանիս գործը հարամ եղաւ, ել չեմ ուզում...

— Հեռո՞ւ...

— Դուքանս վերցրեք ձեզ...

Վարչի ղեմքը ակոսվեց խոստուն ժպիտով:

— Ել չեմ կարող պահել, աստու խաթեր, վերցրեք ձեզ ու ինձ եղ ցավից ազատեք, մեղքենք...

— Պետք լինի, կվերցնենք, բարեկամս — փափուկ տոնով պատասխանեց վարիչը: Զանգահարեց:

Ներս մտավ ցրիչը:

— Ընկեր Մամիկոնին խնդրեցեք ինձ մոտ...

Ավագ գործակատարը յերեվաց:

— Ընկեր Մամիկոն, դուք լավ եք զննել կոռպ-
րատիվի կողքի խանութը, մեզ պետք կգամ, ի՞նչ եք
կարծում...

— Պետք է հիմնական նորոգումներ անել, պատե-
րը խախտւա են:

— Լավ, հետո: Տեսեք, յեթե հնարավոր է առայժմ
պահեստատեղիի կվերածենք:

Ավագ գործակատարը դուրս գնաց

Վարիչը վեր կացավ ու մոտեցավ Մաթոն:

— Այդպես ուրեմն, ուրիշ վոչի՞նչ... Մաթոն լուռ
եր: Նա մի վայրկյան շաղկապ հայացքով նայեց վար-
չի աչքերին, ու, հանկարծ, յերեխայի նման հեկե-
կաց: Սոսքերը կորել եյին բերանից, կարծես համր եր
դարձել:

Վարչի առաջարկած մի բաժակ ջուրն ագահու-
թյամբ խմելուց ու աթոռին նստելուց հետո՝ նա
միայն կարողացավ արտասանել.

— Կյանքս քանդվեց, թշնամուս ջանը դնջացավ
հմի...

Ու նորից հեկեկաց, հեկեկաց ավելի ուժգին...



ՀՀ Ազգային գրադարան



NL0343952

432